# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Գեղակերտ համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ. Գեղակերտ հեռ. 077350489, geghakert.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> մայիսի 2021թ. N 46

### 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի104-րդ հոդվածի 5-րդ մասով

Որոշում եմ

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման համար կազմավորել երկու ընտրական տեղամաս:
2. Առաջին ընտրական տեղամասը կազմավորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքի Մ. Մաշտոցի 36 հասցեում գտնվող մշակույթի տանը, իսկ տեղամասային կենտրոնը կազմավորել մշակույթի տան առաջին հարկում: Տեղամասային կենտրոնի տարածքի տիրապետող նշանակել Արտակ Մարտիրոսյանին:
3. Երկրորդ ընտրական տեղամասը կազմավորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի Մ. Մաշտոցի 22 հասցեում գտնվող <<Գեղակերտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքում, իսկ տեղամասային կենտրոնը կազմավորել դպրոցի առաջին հարկում: Տեղամասային կենտրոնի տարածքի տիրապետող նշանակել Գեղակերտի միջնակարգ դպրոցի ուսումնական մասով փոխտնօրեն Մայրամ Ղազարյանին:
4. Սույն որոշման մեկական օրինակ տրամադրել թիվ 15 տարածքային ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության անձնագրերի և վիզաների վարչության էջմիածնի անձնագրային բաժանմունք, տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Յ. Հակոբյան

2021թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Գեղակերտ համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ. Գեղակերտ հեռ. 077350489, geghakert.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> մայիսի 2021թ. N 47

### ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երրորդ մասով

Որոշում եմ՝

1. 2021թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժողովներ, ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով

Որոշում եմ

2. Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ց. Հակոբյան

2021թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարի
2021թ. մայիսի 14-ի թիվ 47որոշման

ՑԱՆԿ
2021թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների

Արմավիրի մարզ Գեղակերտ համայնք

| հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը /հասցե/ | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Համայնքապետարանի դահլիճ | Մ. Մաշտոցի 30 | 80 | Ըստ օրենքով սահմանված կարգի | Ց. Հակոբյան | Այլ դահլիճի բացակայություն |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Գեղակերտ համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ. Գեղակերտ հեռ. 077350489, geghakert.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> մայիսի 2021թ. N 48

## ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի երրորդ մասով

Որոշում եմ՝

1. 2021թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝
   1)Մեսրոպ Մաշտոցի փողոց,37 -4քմ
   2)Մեսրոպ Մաշտոցի փողոց,47-4քմ
   3)Մեսրոպ Մաշտոցի փողոց, 97-4քմ
   4)Մեսրոպ Մաշտոցի փողոց, 102-4քմ
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ց. Հակոբյան

2021թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ